ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

31 օգոստոսի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

121
(2787)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ԽԱՅՏԱՌԱԿ ՎԻՃԱԿ՝ ԿԳՄՄՆ-ՈՒՄ. ԳՐՔԵՐԸ ՉԵՆ ՏՊՎԵԼ

Երեկ մի խայտառակ հայտարարությամբ է հանդես եկել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը: Պարզվում է՝ հայրենի նախարարությունը չի կարողացել տպագրել դպրոցական նոր դասագրքերը, ու ԿԳՄՍՆ-ից դպրոցների տնօրեններին հանձնարարել են դրանց էլեկտրոնային տարբերակներից թեմաները տպել եւ տալ աշակերտներին: «Դասագրքերի մրցույթը հայտարարվել էր դեռեւս անցյալ տարի, ժամկետը մի քանի անգամ երկարաձգվել է: Մրցույթն ամփոփվել է հունիսի մեկին, եւ ներկայացված հայտերն ուղարկվել են փորձաքննության: Դրական եզրակացություն ստացած դասագրքերը երաշխավորվել են գործածության, ցանկը հաստատվել է նախարարի հրամանով: Դրական եզրակացություն ստացած եւ նախարարի հրամանով հաստատված նոր դասագրքերն այժմ տպագրության փուլում են»,- հայտարարել է փոխնախարարը:

Իսկ շատ դպրոցականներ սեպտեմբերը կսկսեն առանց գրքերի, քանի որ հին չափորոշիչները փոխված են, նորերն էլ՝ դեռ չմշակված:

Ստացվում է՝ նախարարությունը անգամ չի կարողանում մրցույթ հայտարարել, պատշաճ պատրաստվել Գիտելիքի օրվան, ու պետք է դպրոցները սպասեն, մինչեւ այդ հարցը կլուծվի: «Նոր դասագրքերը կմատակարարվեն միայն 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում՝ պայմանավորված նոր չափորոշչի ներդրմամբ: Սակայն այս դասարաններում եւս կան դասագրքեր, որոնց համար մրցութային հայտ չի ներկայացվել, կամ փորձաքննության արդյունքում չեն երաշխավորվել գործածության: Դրանք հիմնականում օտար լեզուների դասագրքերն են: Ուստի 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում այն առարկաները, որոնց համար նոր դասագիրք չի ստեղծվել, դասավանդումը կիրականացվի նախկին դասագրքերի եւ նախապես մշակված ուսումնական նյութերի համադրությամբ, որոնք արդեն հասանելի են ուսուցիչներին: Իսկ այն դասարաններում, որտեղ նոր չափորոշիչ չի ներդրվում, շարունակում են դասավանդել հին դասագրքերով»,- ասել է Սվաջյանը: Այսինքն՝ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, որը հասցնում է լինել գրեթե բոլոր քարոզչական եւ քաղաքական միջոցառումներին, որտեղ վարչապետ Նիկոլ Փաշինյանը ներկա է, չի հասցնում իր ոլորտում առկա խնդիրները լուծել ու այն առաջնային համարել: Կրթական տարին սկսվում է առանց գրքերի, իսկ նախարարը հետաքրքրված է լողի սիրողական մրցաշարով:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում կուսակցական կյանքը կանգ է առել: Արդեն մոտ մեկ ամիս է, ինչ վարչության նիստեր կամ ՔՊ նախաձեռնող խմբի հետ հանդիպումներ չեն լինում: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ-ական վարչության անդամներից տեղեկացավ, որ պատճառը քարոզարշավն է: Այս օրերին իշխանությունն ամբողջ թիմով լծված է քարոզարշավին, իսկ Նիկոլ Փաշինյանը մարզային այցելություններով է զբաղված. նախ՝ Սյունիք էր մեծ շքախմբով այցելել, հետո՝ Լոռի, դրա համար էլ վարչության նիստերի ու կուսակցական հանդիպումների ժամանակ չունեն: Կուսակցության վարչության բոլոր 15 անդամները քարոզարշավով են զբաղված այս օրերին. Գեւորգ Պապոյանը, Վահագն Ալեքսանյանը, Գնել Սանոսյանը, Վաղարշակ Հակոբյանը non-stop ռեժիմով քարոզարշավին են մասնակցում ու Տիգրան Ավինյանի հետ վարչական տարբեր շրջաններ են գնում: Վարչապետի գլխավոր խորհրդական Համբարձում Մաթեւոսյանը, առհասարակ, ո՛չ ՔՊ վարչության նիստերին է մասնակցում, ո՛չ էլ գործադիրում է ակտիվ. անհասկանալի է՝ ի վերջո որոնք են նրա գործառույթները: ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն առողջական խնդիրներ ունի, նոր է վիրահատվել, իսկ Արփի Դավոյանն էլ, ինչպես միշտ, որպես Փաշինյանի «թիկնապահ» ամենուր ուղեկցում է նրան, հիմա էլ հաճախ նրան մարզային այցելությունների ժամանակ տեսնում ենք Փաշինյանի կողքին: ՔՊ-ականների ահա այսչափ զբաղվածությունն ու խիտ գրաֆիկն է պատճառը, որ վարչության նիստեր չեն լինում. վերջին նիստը եղել է օգոստոսի 3-ին:

Ներքին գործերի նախարարությունը 275 մլն դրամ է ծախսելու սեպտեմբերի 17-ին կայանալիք Երեւանի ավագանու ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման համար: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այդ գումարից գրասենյակային նյութերի (թուղթ եւ քարթրիջներ) եւ ընտրական մատյանների կազմման համար նախատեսվել է 3,2 մլն դրամ, իսկ փոստային ծառայությունների համար՝ 271,8 մլն դրամ՝ ընտրողներին քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, տեղամասային կենտրոնի հասցեի եւ ժամանակի մասին ծանուցումներ ուղարկելու համար: Ավելին՝ այսքան գումար Ներքին գործերի նախարարությունը չունի, եւ այն կտրամադրվի կառավարության պահուստային ֆոնդից: Հավելենք, որ Երեւանի ավագանու ընտրությունների պաշտոնական քարոզարշավը մեկնարկել է օգոստոսի 23-ից եւ ավարտվելու է սպետեմբերի 15-ին: Ընտրություններին մասնակցում է 14 ուժ՝ 13 կուսակցություն եւ 1 դաշինք: Այս օրերին քաղաքական ուժերը ակտիվ հանդիպումներ ու քարոզարշավ են իրականացնում Երեւանի տարբեր վարչական շրջաններում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նախաքննության ավարտ է հայտարարվել Ազատ գյուղի զինվորների կացարանում հունվարի 19-ին բռնկված ողբերգական հրդեհի գործով. այն խլեց 15 զինվորի կյանք: Տեղեկությունը մեզ հետ զրույցում հաստատեց նաեւ գործով կալանավորված սպա Եղիշե Հակոբյանի պաշտպան Հովսեփ Սարգսյանը: Ըստ նախաքննական մարմնի՝ սպան բենզինը լցրել էր վառարանը, կրակը անսպասելի թեժացել էր, ինչի հետեւանքով տեղի ունեցավ ողբերգական դեպքը: Հիշեցնենք, որ դեպքը եղել էր այս տարվա հունվարի 19-ին Ազատ գյուղի զինվորական կացարանում, ինչի հետեւանքով մահացան 15 զինծառայողներ. սույն գործով մեղադրյալի աթոռին են 4 անձ:

ԻՐԱՎԻՃԱԿԸ

# ԲԱԲԱՅԱՆԸ՝ ՏԵՂԱՓՈԽՎԵԼԻՔ ԲԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Ֆրանսիայից ուղարկված հումանիտար բեռներով մեքենաներն այսօր առավոտյան Երեւանի Հանրապետության հրապարակից շարժվել էին դեպի Կոռնիձոր՝ այնտեղից Արցախ ուղեւորվելու համար:**

Փարիզի քաղաքապետ Անն Իդալգոն ժամանել էր Հայաստան, որպեսզի անձամբ ուղեկցի հումանիտար բեռները: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արցախի նախագահի խորհրդական Դավիթ Բաբայանը նշեց, որ «հումանիտար» Ադրբեջանը չի թույլատրել, որ Ֆրանսիայից ուղարկված հումանիտար օգնությունը մտնի Արցախ:

-Ի՞նչ էիք կարծում, Ադրբեջանը կթողնե՞ր, որ հումանիտար այդ օգնությունը հասներ Արցախ: Ինչքանով տեղեկացված եմ, այս պահին բեռները Կոռնիձորի հատվածում են, համենայնդեպս, այդ բեռները Արցախ չեն եկել, եւ դժվար թե նման իրավիճակում, հաշվի առնելով Ադրբեջանի պահվածքը, մի օր այդ բեռները կմտնեն Արցախ:

**-Այսինքն՝ հույսեր չկա՞ն, որ հնարավոր է՝ բացեն օգնության մուտքը դեպի Արցախ:**

-Հաշվի առնելով փաստերը՝ մեծ կասկածներ ունենք:

**-Պարոն Բաբայան, Ֆրանսիայից անձամբ Փարիզի քաղաքապետը եկել է, որպեսզի ուղեկցի հումանիտար բեռները, այսինքն՝նույնիսկ այս ամենը չի՞ խանգարում Ադրբեջանին շարունակել իր հանդուգն պահվածքը, եւ իր համար մե՞կ է միջազգային հանրությունը:**

-Միջազգային դատարանը որոշում է կայացնում, բանի տեղ չեն դնում, Ֆրանսիայի քաղաքապետի հե՞տ են հաշվի նստելու: Իհարկե, իրենց համար միեւնույնն է, դրա համար այդ բեռները եթե չթողնեն մուտք գործի Արցախ, Փարիզը պետք է այլ քայլեր ձեռնարկի՝ նաեւ իր ողջ աշխարհաքաղաքական ներուժն օգտագործելով Ադրբեջանի վրա ռեալ ուժ գործադրելու համար, եւ ոչ միայն Ֆրանսիան:

**-Եթե Ադրբեջանը իսկապես թույլ չտա, որպեսզի բեռները մտնեն Արցախ, Ֆրանսիան ինչ-որ այլ քայլեր կձեռնարկի՞, ի՞նչ եք կարծում:**

-Միանշանակ պետք է որ ձեռնարկի: Եթե ռեալ քայլեր չձեռնարկի, լինելու է մեծ աշխարհաքաղաքական եւ բարոյական պարտություն հենց Ֆրանսիայի համար:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ԱՌՋԱԳԱՆՔ

# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԷԹՆԻԿ ԶՏՈՒՄ

**Ֆրանսիայի մի շարք շրջանների ներկայացուցիչներ եկել են Հայաստան իրենց աջակցությունը եւ բարեկամությունը հայտնելու Արցախի ժողովրդին: Գորիսում տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ այս մասին հայտարարեց Փարիզի քաղաքապետ Անն Իդալգոն՝ նշելով, որ Ֆրանսիայից ժամանած պատվիրակությունը ներառում է ամենատարբեր կուսակցությունների եւ քաղաքական հայացքների ներկայացուցիչներ, որոնց բոլորին միավորում է Հայաստանը եւ Արցախը:**

«Մենք այսօր այստեղ ենք, որովհետեւ Ֆրանսիայում հայկական կազմակերպությունները դիմեցին մեզ եւ ասացին, որ ժամանակն է գործել, ժամանակն է դիմել Ֆրանսիայի ժողովրդին: Եվ հատկապես Ֆրանսիայի տեղական իշխանությունների միավորման անհրաժեշտությունը կար, որպեսզի կարողանանք մարդասիրական օգնություն ուղարկել Արցախ:

Տեղական ինքնակառավարման մարմինների միավորման շնորհիվ՝ հնարավոր եղավ 10 բեռնատար մեքենա հումանիտար օգնություն հավաքել, որոնք պարունակում են պարենային սնունդ, երեխաների համար սնունդ, կաթի փոշի, նաեւ գեներատորներ, արեւային պանելներ: Այս ամենը հնարավորություն կտա Արցախին դիմադրել»,- ընդգծեց Իդալգոն:

Նա նշեց, որ մարդասիրական օգնությունը նախատեսված է Արցախի 6 քաղաքների համար, որոնք 2022 թվականի դեկտեմբեր ամսից շրջափակման մեջ են: Փարիզի քաղաքապետի խոսքով՝ կանայք, երեխաները, նորածինները, տղամարդիկ չեն կարողանում արժանապատվորեն ապրել իրենց հողի վրա:

«Մեր ուղերձը հստակ է եւ պարզ. նախ եւ առաջ կոչ ենք անում հարգել միջազգային իրավունքը: Արցախահայերը շրջափակման մեջ են՝ անկախ իրենց կամքից, եւ այս շրջափակումը իրականացվում է՝ խախտելով միջազգային իրավունքը եւ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը: Այն, ինչ տեղի է ունենում այսօր Արցախում, նման է ցեղասպանության:

Միջազգային քրեական դատարանի նախկին դատախազն այն, ինչ այսօր տեղի է ունենում Արցախում, որակում է որպես ցեղասպանություն, եւ ցեղասպանությունը որակող սկզբունքներից չորսը ճանաչվել են միջազգային հանրության եւ փորձագետների կողմից:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի խորհրդականը, որը պատասխանատու է ցեղասպանության կանխարգելման համար, եւս նույն բառն է օգտագործում Արցախում տեղի ունեցող իրավիճակը որակելու համար: Ցեղասպանություն, էթնիկ զտում ավտորիտար ռեժիմի կողմից մի ժողովրդի հանդեպ, որը պարզապես պահանջում է իր իրավունքները հարգել, որն ունի ցանկացած մարդ եւ ժողովուրդ: Այս իրավիճակի պատճառով ենք եկել այստեղ՝ վկայելու եւ դատապարտելու: Եվ մենք նաեւ դիմում ենք Ֆրանսիայի նախագահին, որ նա օգտագործի ՄԱԿ-ի ԱԽ-ում իր դիրքը բանաձեւ ընդունելու համար՝Արցախի ժողովրդի իրավունքները հարգելու նպատակով»,- շեշտեց Փարիզի քաղաքապետը:

Ֆրանսիայի Սենատում մեծամասնություն կազմող Հանրապետական խմբակցության նախագահ, ԼՂ հարցով ուսումնասիրության խմբի ղեկավար Բրունո Ռըտայոն էլ հայտարարեց, որ Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացնում է ցեղասպանության եւ էթնիկ զտման քաղաքականություն:

«Այն, ինչ այսօր տեղի է ունենում Արցախում, հանգեցնում է էթնիկ զտման եւ ցեղասպանության: Այստեղ լինելու մեր առաջին պատճառն այն է, որ ողբերգություն է տեղի ունենում: Այսօր տեղի ունեցողն Արցախը վերածում է համակենտրոնացման ճամբարի՝ բաց երկնքի տակ: Էթնիկ զտման եւ ցեղասպանության այդ փորձն ուղղված է 120 հազար մարդու դեմ, որից 30 հազարը երեխաներ են: Մենք պահանջում ենք Ֆրանսիայի նախագահից, օգտվելով Ֆրանսիայի դիրքից, այսինքն՝ այն փաստից, որ Ֆրանսիան ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամ է, ընդունել տալ մի բանաձեւ, որը վերջապես թույլ կտա բացել Լաչինի միջանցքը եւ դնել այն միջազգային պաշտպանության տակ, որպեսզի բացվի նաեւ երթեւեկությունը մարդասիրական ճանապարհով»,- ասաց Ֆրանսիացի սենատորը:

## ԱԿՏԻՎ ՆՍՏԱՇՐՋԱՆ



Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները հաջորդ շաբաթվանից կսկսեն նիստեր անել:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը նիստ կգումարի սեպտեմբերի 4-ին: Այդ օրը նիստ կգումարի նաեւ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Հաջորդ օրը՝սեպտեմբերի 5-ին՝ժամը 12:00-ին, տեղի կունենա Աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նիստը, նույն օրը՝ ժամը 14:00-ին, նիստ կգումարի Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը:

Սեպտեմբերի 6-ին էլ՝ ժամը 12:00-ին, նիստ կհրավիրի Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը:

Հիշեցնենք, որ ԱԺ նոր նստաշրջանը մեկնարկելու է սեպտեմբերի 12-ից:

## «ՍԻՐԵԼԻ» ԹԵԿՆԱԾՈՒ ԵՆ ԱՌԱՔԱՐԿԵԼ

Քաղաքական իշխանությունները շտապում են ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության պետի նշանակման հարցում: Բանն այն է, որ մարդ չեն կարողանում այդ պաշտոնում նշանակել, բայց, մյուս կողմից էլ, զորակոչի փուլ է, եւ պաշտոնը թափուր թողնելը անթույլատրելի է: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ երեկ ներքին քննարկումների արդյունքում քաղաքական իշխանություններին առաջարկել են, որ լավ թեկնածու է Հանրապետական զինկոմիսարիատի զինակոչի բաժնի պետ, փոխգնդապետ Արեն Սարգսյանը: Ու արդեն քննարկվել է նրան այդ պաշտոնում նշանակելու հարցը: Թե ինչ կորոշի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, պարզ կլինի առաջիկայում: Գաղտնիք, չէ, որ մշտապես Փաշինյանն է ի վերջո իր համար «սիրելի» կադրերին նշանակում նման պատասխանատու պաշտոններին, որոնք հիմնականում ձախողում են. վկան խաղաղ պայմաններում մահացած զինվորներն են:

## ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

«Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մեսրոպ Առաքելյանը երեկ հանդես եկավ մամուլի ասուլիսով՝ ամփոփելով օգոստոսի 23-ից սկսված Երեւանի ավագանու ընտրությունների քարոզարշավը, որը կատարվել է կուսակցության քաղաքապետի թեկնածու Մանե Թանդիլյանի գլխավորությամբ: «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվեց՝ մտահոգիչ չէ արդյոք այն հանգամանքը, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյանը, լինելով վարչապետ Նիկոլ Փաշինյանի վաղեմի ընկերն ու բարեկամը, կարող է աջակցել նրան եւ որոշակի առավելություններ տալ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը:

«Բացի ԿԸՀ-ից, այլ կառույցներ եւ պաշտոնյաներ եւս կան, որոնք եւս առնչություն ունեն իշխանության հետ: Դա փաստ է, եւ մնացած տեղի ունեցող ընտրական պրոցեսների ռեսուրսները ընդունում ենք՝ ի գիտություն: Մեզ չի կաշկանդում այդ փաստը, եւ այս իրավիճակում մեր ռեսուրսները բավարար են ընտրություններում հաղթանակ ապահովելու համար: Մի տեղ Վահագն Հովակիմյանն է, մի տեղ էն մեկն է. մեզ չի կաշկանդում»:

Անդրադառնալով Երեւանում առկա գովազդային վահանակներին՝ Առաքելյանը նշեց. «Իսկ ինչ վերաբերում է գովազդային վահանակներին, մեր ունեցած տեղեկություններով՝ գովազդային վահանակները բաշխվել են վիճակագրությամբ, եւ ով որտեղ է գովազդային վահանակ տեղադրել՝ ես տեղյակ չեմ: Մերը որտեղ է համընկել, մենք այնտեղ էլ տեղադրել ենք»:

## ՌԴ-Ն՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՋԱՆՔԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մենք բազմիցս ասել ենք, որ ողջունում ենք ցանկացած նախաձեռնություն, որը չի հակասում Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորմանն ուղղված Ռուսաստանի ջանքերին եւ չի կրկնում եւ, առավել եւս, չի խաթարում այդ ջանքերը»,- ոչ շաբաթական ճեպազրույցի ժամանակ ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ պատասխանելով հարցին, թե ինչպես է ՌԴ ԱԳՆ-ն վերաբերվում Բաքվի եւ Երեւանի միջեւ հակամարտությունում միջնորդական ջանքերն ակտիվացնելու՝ Ֆրանսիայի նախագահի նախաձեռնությանը:

«Մյուս կողմից՝ մենք քաջատեղյակ ենք այս ուղղությամբ Ֆրանսիայի գործունեությանը, եւ, ինչը պակաս կարեւոր չէ, նման միջնորդական ջանքերի շրջանակներում նախ եւ առաջ անհրաժեշտ է հաշվի առնել հակամարտության երկու կողմերի դիրքորոշումը, այսինքն՝ եւ՛ Հայաստանի, եւ՛ Ադրբեջանի: Եվ առանց դրա չարժե ակնկալել առանց այն էլ բավականաչափ թեժացած իրավիճակի հանգուցալուծման որեւէ առաջընթաց: Սա ցանկացած միջնորդության Ալֆան եւ Օմեգան է»,- ասել է Զախարովան:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

# ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽՈՐԴՈՂ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

**Արցախի Ազգային ժողովի նախագահ Դավիթ Իշխանյանը մանրամասնել է, թե ինչպես է ստացվել, որ ինքը, լինելով փոխզիջում կազմող խմբակցության ներկայացուցիչ, ընտրվել է Ազգային ժողովի նախագահի պաշտոնում:**

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ օգոստոսի 30-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Իշխանյանն ընդգծել է, որ դասական իրավիճակում հասկանալի եւ տրամաբանական կլիներ, որպեսզի Արցախի Հանրապետության Ազգային ժողովի քաղաքական մեծամասնությունն ունենար խորհրդարանի նախագահի իր թեկնածուն, սակայն այժմ իրավիճակն այդպիսին չէ:

«Առաջին հայացքից, կարծես թե, անտրամաբանական է հնչում՝ երեք հոգանոց խմբակցության անդամը լինի Ազգային ժողովի նախագահ: Եթե մենք լինեինք դասական իրավիճակում, եւ դասական քաղաքական գործընթացներ տեղի ունենային, այդ պարագայում հասկանալի կլիներ, եւ տրամաբանական էր, որ քաղաքական մեծամասնությունն ինքն ունենա խորհրդարանի նախագահ: Երբ Արցախի նախագահն ինձ հրավիրեց իր մոտ եւ առաջարկեց Ազգային ժողովի նախագահի պաշտոնը ստանձնել, բնականաբար, հարցը քննարկվեց այլ ուղղությամբ՝ քաղաքական մեծամասնությունը պետք է ունենա իր թեկնածուն, եւ քաղաքական մեծամասնությունից պետք է լինի Ազգային ժողովի նախագահը, որպեսզի շահարկումներ չլինեն: Բավականին բարդ գործընթաց է տեղի ունեցել: Նախ՝ հարցը կուսակցական քննարկումների նյութ է դարձել, այնուհետեւ քննարկվել է խորհրդարանում ներկայացած բոլոր քաղաքական ուժերի ղեկավարների եւ խմբակցությունների անդամների հետ՝ հաշվի առնելվ ներկա իրավիճակը: Այդ ընթացակարգն անցնելուց հետո է միայն վերջնական համաձայնություն տրվել»,-մանրամասնեց Իշխանյանը՝ ընդգծելով, որ իր եւ ՀՅԴ կուսակցության կողմից համաձայնություն է տրվել՝ հաշվի առնելով առկա իրավիճակն ու Արցախի առաջ ծառացած մարտահրավերները:

Հիշեցնենք, որ դեռ հուլիսին Արցախի Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանը հրաժարական էր տվել:

Խորհրդարանից հաղորդեցին, որ ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 130-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Թովմասյանը ներկայացնում է հրաժարական Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի պաշտոնից:

Արթուր Թովմասյանը հրաժարականի նախորդ օրը հայտնել էր սպասվելիքի մասին՝ հավելելով, որ խորհրդարանի ղեկավարի պաշտոնից հեռանում է իր որոշմամբ:

«Իմ անձնական որոշմամբ քաղաքական պատասխանատվություն եմ վերցնում՝ հեռանալու Ազգային ժողովի նախագահի պաշտոնից, բայց միշտ հավատարիմ կմնամ 1991 թվականին մեր ժողովրդի կողմից հանրաքվեով ընդունված գաղափարին», - նշել էր Թովմասյանը:

Արցախի խորհրդարանը 3 տարի ղեկավարած Արթուր Թովմասյանի հրաժարականի մասին ավելի վաղ մամուլն էր գրել, ապա սկսեցին շրջանառվել լուրեր , որ Ազգային ժողովի նախագահի թեկնածու է առաջադրվելու ընդդիմադիր «Հայ հեղափոխական դաշնակցության» պատգամավոր Դավիթ Իշխանյանը:

Խորհրդարանի նոր ղեկավարի ընտրությունը տեղի ունեցավ հաջորդ շաբաթասկզբին, որի արդյունքում նախագահ ընտրվեց Դավիթ Իշխանյանը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ԴԻՄԵԼ ԵՆ ՄԻԵԴ ⇨

Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչը տեղեկացնում է, որ օգոստոսի 28-ին Լաչինի միջանցքից առեւանգված երեք քաղաքացիական անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմում է ներկայացվել՝ Ադրբեջանի նկատմամբ միջանկյալ միջոց կիրառելու պահանջով:

## ՓԱԿԵԼ ԵՆ ՄՈՒՏՔԸ

Ռուսաստանի Դաշնության խաղաղապահները բետոնե արգելապատնեշներով եւ փշալարերով փակել են Աղդամ-Ստեփանակերտ ճանապարհը, որով Ադրբեջանը ցանկանում է, իբր, «հումանիտար օգնություն» ուղարկել Լեռնային Ղարաբաղ:

Համացանցում տարածված տեսանյութերից երեւում է՝ ինչպես են խաղաղապահները փշալարերով եւ բետոնե արգելապատնեշներով փակել ճանապարհի այն հատվածը, որտեղ հասել եւ կանգնել են «հումանիտար» օգնությամբ» ադրբեջանական բեռնատարները:

Ճանապարհը փակել են նաեւ արցախցիները, որոնք շեշտում են՝ ահաբեկչական պետություն Ադրբեջանից իրենց ոչ մի օգնություն պետք չէ: Նրանք նշում են, որ այդ ճանապարհի գործարկումը իրենց համար անընդունելի է: Արցախցիները վրաններ են տեղադրել այդ հատվածում:

Ադրբեջանցիները նույնպես վրաններ են տեղադրել այն հատվածում, որտեղ կանգնած են ադրբեջանական բեռնատարները:

Ադրբեջանն օգոստոսի 29-ին հերթական շոուն կազմակերպեց՝ հայտարարելով, թե Աղդամ-Ստեփանակերտ ճանապարհով 40 տոննա այլուր է ուղարկում Լեռնային Ղարաբաղ՝ որպես «մարդասիրական օգնություն»:

Նշենք նաեւ, որ երեկ Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզի եւ երկրի մի շարք խոշոր ռեգիոնների կողմից Արցախին ուղարկված հումանիտար բեռներով բեռնված մեքենաները Երեւանից շարժվել են դեպի Կոռնիձոր՝ այնտեղից Արցախ ուղեւորվելու համար:

Ավելի ուշ Ֆրանսիայից ժամանած պատվիրակության անդամները հայտնեցին, որ Ադրբեջանը խոչընդոտել է իրենց օգնության մուտքն Արցախ: Ադրբեջանական լրատվամիջոցները հայտնում են, որ Բաքուն առաջարկել է օգտվել Աղդամ-Ստեփանակերտ ավտոճանապարհից:

ԼՂ մայրաքաղաք Ստեփանակերտում էլ, ի նշան երախտագիտության, բարձրացվել է Ֆրանսիայի դրոշը:

## ԻՐԱՎԱԿԱՆ

ՕՏԱՐՎԵՑ

# ՊԵԿ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

**Երեւան քաղաքի Մարշալ Բաղրամյան, Մեսրոպ Մաշտոց պողոտաների եւ Մոսկովյան փողոցի միջեւ ընկած պուրակի ստորգետնյա շինությունը 2017 թվականի մարտի 25-ին օրենքի խախտմամբ օտարվել է «Ֆոտոմաստեր» ՍՊ ընկերությանը:**

Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների դատախազությունում պետական (համայնքային) շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2001 թվականի փետրվարի 12-ին «Կանաչապատում» ՊՓԲԸ-ի եւ «Ֆոտոմաստեր» ՍՊ ընկերության միջեւ կնքվել է Պուրակում գտնվող տարածքի վարձակալության պայմանագիր: Պայմանագրի համաձայն՝ Պուրակը (4668 քմ) 25 տարի ժամկետով վարձակալությամբ հանձնվել է «Ֆոտոմաստեր» ընկերությանը:

2014 թվականի հուլիսի 8-ին ընկերության բաժնեմասերի նկատմամբ գրանցվել է Արտյոմ եւ Գուրգեն Խաչատրյանների սեփականության իրավունքը: Նույն թվականի օգոստոսի 4-ին ընկերությանը տրվել է շինարարության թույլտվություն՝ պուրակում սրճարանների տաղավարների ստորգետնյա շինության կառուցման աշխատանքների կատարման համար:

Երեւանի քաղաքապետի՝ 2017 թվականի մարտի 25-ի որոշմամբ՝ 2001 թվականին կնքված վարձակալության պայմանագիրը լուծվել է: Նույն օրը, առանց մրցույթի, ընկերության հետ կնքվել է վերոնշյալ հողամասի վարձակալության պայմանագիր՝ վարձակալության ժամկետ սահմանելով մինչեւ 2026 թվականի փետրվարի 12-ը:

2017 թվականի ապրիլի 12-ին Երեւան քաղաքի Մոսկովյան փողոցի 29/4 հասցեում գտնվող 3923,54 քմ մակերեսով հողամասի նկատմամբ (հողամասի սահմանները վերաճշտվել են Երեւանի քաղաքապետի 2017 թվականի փետրվարի 16-ի որոշմամբ) գրանցվել է «Ֆոտոմաստեր» ՍՊ ընկերության վարձակալության իրավունքն, ու նույն օրը վերոնշյալ հողամասում գտնվող ընդհանուր 1737,06 քմ մակերեսով ստորգետնյա շինությունների նկատմամբ գրանցվել է ընկերության սեփականության իրավունքը: Մինչդեռ, Երեւանի քաղաքապետի՝ 2017 թվականի փետրվարի 16-ի 415-Ա որոշման համաձայն՝ Մոսկովյան 29/4 հասցեում գտվող, 3923,54 քմ մակերեսով հողամասն ընդգրկված է Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում (օտարման ոչ ենթակա տարածքներ):

Հաշվի առնելով, որ պաշտոնատար անձինք վերոնշյալ հողամասը վարձակալության իրավունքով, առանց մրցույթի հանձնել են «Ֆոտոմաստեր» ընկերությանը՝ վարձակալության պայմանագիրը լուծելուց հետո ստորգետնյա շինությունները համայնքի գույքային հաշվեկշռում հաշվառելու փոխարեն՝ «Ֆոտոմաստեր» ընկերության համար ստեղծել են արտոնյալ պայմաններ եւ օրենսդրության կոպիտ խախտումներով ստորգետնյա շինությունների նկատմամբ գրանցել են ընկերության սեփականության իրավունքը՝ Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունը 2023 թվականի օգոստոսի 24-ին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե:

Հակակոռուպցիոն կոմիտեում 2023 թվականի օգոստոսի 25-ին նախաձեռնվել է քրեական վարույթ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ):

Դատախազությունն առաջիկայում հայց կներկայացնի դատարան՝ Երեւանի քաղաքապետի որոշումները վիճարկելու եւ այդ հիմքով կատարված գործընթացներն անվավեր ճանաչելու պահանջով:

ՀԻՄՆԱՎՈՐՎԵՑ

# ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԿԵՂԾ ՍԵՐՏԻՖԻԿԱՏՆԵՐ

**ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացված քրեական վարույթով ձեռք բերված աղբյուրներով հիմնավորվել է, որ Ն. Ս.-ն, աշխատելով «Սոլիտակի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունում՝ որպես Սոլիտակի տարածաշրջանի դատախանատու մանկաբույժ, իմունականխարգելման կաբինետի դատախանատու բժիշկ, կատարելով կազմակերպական-տնօրինչական եւ վարչատնտեսական գործառույթներ եւ այդկերպ հանդիսանալով դաշտոնատար անձ, կատարել է դաշտոնեական կեղծիք:**

Մասնավորապես՝ պարզվել է, որ Ն. Ս.-ն «COVID-19» համավարակի դեմ իրենց կողմից իրականացված պատվաստումներն արձանագրելու նպատակով նույն բուժկենտրոնի բուժքույր Հ.Ղ.-ի հետ միասին վարել են պատվաստումների գրանցման սեւագիր մատյան, որից տվյալների արտագրումը Ն.Ս.-ն հանձնարարել է պատվաստման գործընթացի հետ որեւէ առնչություն չունեցող այլ բուժաշխատողի: Գիտակցելով, որ սեւագիր մատյանից այդ տվյալները նույնությամբ արտագրվելու են պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող՝ Բժշկական կենտրոնի պատվաստումների գրանցամատյանում՝ Ն. Ս.-ն Հ. Ղ.-ի հետ նախնական համաձայնությամբ եւ շահադիտական դրդումով, այն է՝ յուրաքանչյուր պատվաստման համար լրավճար ստանալու ակնկալիքով, ՀՀ 3 քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետությունում չգտնվելու եւ երկրորդ դեղաչափով պատվաստված չլինելու պայմաններում ակնհայտ կեղծ գրառումներ են կատարել այդ մասին: Այնուհետեւ, Ն. Ս.-ն Հ. Ղ.-ի հետ կեղծ տեղեկություններ պարունակող պաշտոնական փաստաթուղթը շրջանառության մեջ դնելով, այն հանձնել է նույն բժշկական կենտրոնի համապատասխան բաժին, որտեղ, գրանցամատյանում առկա տեղեկությունների հիման վրա, կազմվել եւ հաստատվել են կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստված լինելը հավաստող կեղծ սերտիֆիկատներ, եւ դրանք մուտքագրվել են էլեկտրոնային առողջության միասնական տեղեկատվական «ԱՐՄԵԴ» համակարգ: Այսպիսով, Ն. Ս.-ն միջնորդավորված կերպով կատարել է պաշտոնեական կեղծիք:

Վերը նշված հանցանքների կատարման համար Ն.Ս.-ին /2 դրվագ/ եւ Հ.Ղ.-ին /3 դրվագ/ մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով:

Հետագայում հսկող դատախազի որոշմամբ Հ.Ղ.-ի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵՑ

## ՀԵՐԹԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԸ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Կարեն Գալստյանին մեղադրանք է առաջադրվել:

Բանն այն է, որ նա, հաշվառված լինելով ՀՀ ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման պահեստազորում՝ որպես նշանառու, 2020թ.-ի սեպտեմբերի 27-ին օրենքով սահմանված պատշաճ կարգով ծանուցվել է:

Սակայն դրանից հետո պարտավոր լինելով զորահավաքային միջոցառումներին մասնակցելու նպատակով ծանուցագրում նշված օրը ներկայանալ հիշյալ տարածքային ստորաբաժանում՝ նախ՝ հրաժարվել է ստանալ ծանուցագիրը, ապա՝ չի ներկայացել տարածքային ստորաբաժանում՝ այդկերպ խուսափելով զորահավաքային զորակոչից:

## ԶԵՆՔԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔ

Օգոստոսի 22-ին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ նույն օրը Կենտրոն վարչական շրջանում կրակոցներ են արձակվել:

Shamshayn.com-ի հաղորդմամբ՝ ոստիկանության ծառայողները պարզել են ենթադրյալ կասկածյալ կրակողների ինքնությունը, երբ հերթական օպերատիվ տեղեկություններն են ստացել, որ նրանք գտնվում են Խորենացի փողոցում:

Ոստիկանները ապօրինի զենքի առուվաճառքի, խուլիգանության, ապօրինի զենք-զինամթերք պահելու հիմնավոր կասկածանքով ձերբակալել եւ Ոստիկանության կենտրոնական բաժին են տեղափոխել Երեւանի բնակիչներ, 28-ամյա Սուրեն Մ.-ին եւ 29-ամյա Հայկ Ս.-ին. վերջիններս եղել են Հայկ Ս.-ի կողմից շահագործվող Toyota մակնիշի ավտոմեքենայով:

Արդեն տեղում պարզվել է, որ, զենքի առուվաճառքի հետ կապված, զենքը փորձարկելու նպատակով նրանք բարձրացել են Նար-Դոսի փողոցի 1-ին շենքի տանիք, որտեղ բացահայտ անհարգալից վերաբերմունք են ցուցաբերել հասարակության նկատմամբ եւ անկանոն կրակոցներ արձակել, իսկ հետո տանիքից իջել, Սուրեն Մ.-ն զենքը թողել է իր տանը, իսկ կրակված պարկուճները նետել շենքի հարեւանությամբ գտնվող աղբամանի մեջ:

Ոստիկանության կենտրոնական բաժնի պահպանվող հատուկ տարածք տեղափոխված Հայկ Ս.-ի ավտոմեքենայի սրահում հայտնաբերվել է կրակված 1 հատ պարկուճ եւ 1 փամփուշտ, իսկ Սուրեն Մ.-ի մոտ հայտնաբերվել է գաղտնի փականով դանակ:

Դեպքի փաստով Ոստիկանության կենտրոնական բաժնում փաստաթղթեր են ձեւակերպվել, որոնք փոխանցվել են Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների 3-րդ քննչական բաժին: Սուրեն Մ.-ն եւ Հայկ Ս.-ն Ոստիկանության կենտրոնական բաժնից ներկայացվել են քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 28-ից 29-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 54 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐՔ

## ՊԱՅՔԱՐ՝ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԴԵՄ

Տավուշի մարզի գյուղերին հարակից տարածքներում գործում են փայտածուխի արտադրամասեր, որոնք իրենց ծխով, արտանետումներով աղտոտում են շրջակա միջավայրը, բնությանը մեծ վնասներ են պատճառում: Սակայն տարիներ շարունակ այդ արտադրամասերն անարգել գործում են, քանզի դրանք պատկանում են իշխանությանը մոտ կանգնած անձանց, կամ իշխանավորների «կրիշայի տակ են»: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը հանձնարարել է փայտածուխի արտադրամասերը փակել, եթե դրանք հրդեհի պատճառ կարող են դառնալ: Տավուշի մարզպետարանից հայտնում են, որ օգոստոսի 29-ին մարզպետ Հայկ Ղալումյանը նիստ է վարել Տավուշի մարզում անտառային եւ բուսածածկ տարածքների հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, դրանց տարածման կանխման, ինչպես նաեւ դրանց հետեւանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի հետ: Նիստին մասնակցել են աշխատանքային խմբի ղեկավար, Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ Վահան Փիրումյանը, մարզպետարանի պաշտոնյաներ, Իջեւան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ համայնքների ղեկավարները, ՇՄՆ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի Տավուշի տարածքային բաժնի պետ Դավիթ Խառատյանը, ՇՄՆ «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի եւ «Հայանտառ» ՊՈԱԿ «Իջեւանի անտառտնտեսություն», «Սեւքարի անտառտնտեսություն», «Նոյեմբերյանի անտառտնտեսություն», «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղերի տնօրենները: Մարզպետ Հայկ Ղալումյանը հանձնարարել է ուսումնասիրել անտառամերձ փայտածուխի արտադրամասերը, անհրաժեշտության դեպքում փակել դրանք հնարավոր հրդեհներից խուսափելու համար: Ըստ Տավուշի մարզպետ Հ. Ղալումյանի տրամաբանության՝ անտառամերձ փայտածուխի արտադրամասերը տարվա բոլոր եղանակներին կարող են անարգել աղտոտել շրջակա միջավայրը, իսկ ամռանը, աշնան սկզբին դրանք կարելի է փակել, որպեսզի հրդեհներ չառաջացնեն:

## ԱՆՏԱՌԱՀԱՏՈՒՄ

Բերդ համայնքի Իծաքար եւ Նավուր գյուղերի բնակիչները հայտնում են, որ Իջեւան համայնքի բնակիչները Բերդ համայնքի անտառներում հատատեղեր են վերցրել եւ մեծածավալ հատումներ են իրականացնում: Այդ ծառահատումները կատարվում են փաստաթղթերով՝ օրինականության անվան ներքո: Իջեւանի անտառները նախկին տարիներին շատ են տուժել ապօրինի հատումներից, ուստի Իջեւանի «քյոլի գործ անողները» հասել են ավելի հեռու՝ Բերդի անտառներ: Նաեւ Ճամբարակ համայնքի բնակիչներն են Բերդի տարածաշրջանի՝ Ճամբարակ համայնքին սահմանակից անտառներում հատումներ կատարում:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

**«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հաստատվել է ուսուցիչների 2023 թվականի կամավոր ատեստավորման ժամանակացույցը:**

Ըստ այդմ՝ «Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն» եւ «Գերմաներեն» առարկաների ուսուցիչների ատեստավորումը տեղի կունենա սեպտեմբերի 23-ին, «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» եւ «Շախմատ» առարկաների ուսուցիչների ատեստավորումը՝ սեպտեմբերի 24-ին, «Հայոց լեզու», մայրենի՝ազգային փոքրամասնության դպրոցների համար, «Հասարակագիտություն» առարկաների ուսուցիչների ատեստավորումը՝ սեպտեմբերի 30-ին, «Տարրական ուսուցման մեթոդիկա», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա», «Երգերաժշտություն» առարկաների ուսուցիչների ատեստավորումը՝հոկտեմբերի 1-ին, «Պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «ՆԶՊ» եւ «Ֆիզկուլտուրա» առարկաների ուսուցիչների ատեստավորումը՝ հոկտեմբերի 7-ին, «Մաթեմատիկա» եւ «Ինֆորմատիկա» առարկաների ուսուցիչների ատեստավորումը՝ հոկտեմբերի 8-ին:

Կամավոր ատեստավորմանը 2023 թ. մասնակցելու հայտ է ներկայացրել շուրջ 6355 ուսուցիչ: Ատեստավորումը, ըստ առարկաների, իրականացվում է գրավոր եղանակով:

Ուսումնական հաստատությունում նախարարության կողմից երաշխավորված դպրոցական բաղադրիչով առարկաներ դասավանդող ուսուցիչը կարող է ատեստավորվել տվյալ բնագավառի՝ ատեստավորման ցանկում ընդգրկված առարկաներից որեւէ մեկով՝ իր ընտրությամբ:

Անկախ դասավանդած առարկաների քանակից՝ ուսուցիչը կարող է ատեստավորման հայտ ներկայացնել միայն մեկ առարկայից՝ իր ընտրությամբ:

Մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը եւս կարող է մասնակցել ատեստավորմանը: Ատեստավորմանը կարող է մասնակցել նաեւ «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի պահանջներին համապատասխանող եւ վերոնշյալ առարկաների մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչ չաշխատող անձը:

Հավելենք, որ 2023 թվականի կամավոր ատեստավորմանը կարող են մասնակցել նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում հանրակրթական առարկաներ դասավանդող մասնագետները:

Ատեստավորմանը կարող են մասնակցել նաեւ ուսումնական հաստատություններում դասավանդող միջին մասնագիտական որակավորմամբ այն ուսուցիչները, որոնք «Հանրակրթության մասին» օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջի համաձայն՝ չեն համապատասխանում նշված օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջներին, ըստ որի՝ նրանց մասնագիտական գործունեությունը 2023 թվականի օգոստոսի 20-ից հետո դադարեցվելու է, եթե մինչեւ այդ չեն ապահովում ուսուցչին ներկայացվող պահանջները: Նշված կարգավորումը չի տարածվի միջին մասնագիտական կրթությամբ այն ուսուցիչների վրա, որոնք կմասնակցեն կամավոր ատեստավորմանը եւ կապահովեն նվազագույնը 60 տոկոս արդյունք: 60-69 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում ուսուցիչները կհամարվեն ատեստավորված՝ առանց հավելավճարի հատկացման եւ դրույքաչափի փոփոխության: 70-100 տոկոս արդյունք ցուցաբերելու դեպքում ուսուցչի դրույքաչափը կբարձրացվի եւ կտրվի համապատասխան տոկոսի չափով հավելավճար:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

# ԲԱՔՈՒՆ՝ ԴԵՄ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻՆ

**Ստեփանակերտը ողջամիտ առաջարկներին միշտ բաց է, բայց Ակնայի ճանապարհը բացելու Ադրբեջանի տարբերակն ընդունելի չէ: Այս մասին երեկ՝ օգոստոսի 30-ին, լրագրողների հետ զրույցում ասաց ԱՀ ԱԳ նախարար Սերգեյ Ղազարյանը:**

«Այն, ինչը Ադրբեջանը վերջնագրի տեսքով ներկայացնում է, մեր հայրենակիցները դրա վերաբերյալ դիրքորոշումը հայտնել են: Բայց այս տարբերակում, երբ ադրբեջանական կողմը փորձում է պարտադրել, ընդունելի չէ, եւ տեսնում եք, թե մեր հայրենակիցները ինչպես են արձագանքել նմանատիպ առաջարկին»,- նշեց Սերգեյ Ղազարյանը:

Անդրադառնալով այն դիտարկմանը, թե ԱՀ իշխանությունները, կարծես, դեմ չեն Ադրբեջանի առաջարկին, նախարարը պատասխանեց, որ իշխանության պարտավորությունն է քննարկել բոլոր տեսակի առաջարկությունները, որոնք գալիս են թե՛ միջնորդների, թե՛ ադրբեջանական կողմից. «Բայց այս առաջարկները պետք է լինեն ողջամիտ»:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւի այն հայտարարությանը, թե Ակնայից Ստեփանակերտ ճանապարհի բացումից հետո 24 ժամվա ընթացքում կբացվի նաեւ Լաչինի ճանապարհը, Ղազարյանն արձագանքեց. «Ցավոք, ադրբեջանական կողմը անգամ նոյեմբերի 9-ի փաստաթուղթը, որի տակ կա Ադրբեջանի նախագահի ստորագրությունը, հենց ադրբեջանական կողմն է խախտում վերցրած պարտավորությունները: Որեւէ մի քայլ այս ընթացքում չի վկայում այն մասին, որ ադրբեջանական կողմը ստանձնած պարտավորությունները կկատարի»:

Հարցին՝ Ստեփանակերտի եւ Բաքվի միջեւ հանդիպում առաջիկայում հնարավոր է արդյոք, Սերգեյ Ղազարյանն ասաց. «Արցախյան կողմն ամենաշահագրգիռ կողմն է, որպեսզի խաղաղ ճանապարհով, բանակցությունների միջոցով մենք փորձենք անգամ ամենածանր հարցերին փոխընդունելի լուծում գտնել, սակայն ադրբեջանական կողմը խուսափում է դրանից: Պարբերաբար ռուս խաղաղապահների միջոցով մենք առաջարկներ ենք փոխանցում հանդիպումների մասին, բայց ադրբեջանական կողմն ուղղակի չի պատասխանում»:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 17 ՃՏՊ. 20 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 18 սեպտեմբերի 2023 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ.-ին:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝ Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

ԼոտՀՀ, քաղաք Երեւան, Ավան, Աճառյան փողոց, 39/25 հասցեում գտնվող 47,2 ք.մ. նախագծային բնակարան (1-ին մասնաշենք, թիվ 4): Գրավի առարկա է հանդիսանում 47,2 ք.մ. մակերեսով բնակարանի գնելու իրավունքի գրավը,

Լոտի մեկնարկային գինը՝ 29500000 (քսանինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝Միջնորդավճար),

Լոտը գրավադրված է:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը.

Ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը,

Իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդին կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝ www.llcbst.am, www.borsa.am

## ԱԼՅՈՒՐԻ ՔԻՉ ՊԱՇԱՐ

Ստրասբուրգի քաղաքապետ Ժաննա Բարսեղյանը երեկ հայտարարեց, որ Արցախի արտգործնախարարն ասել է, որ ալյուրի ընդամենը երկու օրվա պաշար է մնացել՝ բացատրելով, որ իրավիճակն օրեցօր վատանալու է: Նշենք, որ Փարիզը, Իլ-դե-Ֆրանսը, Օվերն-Ռոն-Ալպը, Օ դը-Ֆրանսը, Օքսիտանիան եւ Լուարի շրջանն Արցախի համար մարդասիրական օգնությամբ 10 մեքենա են ուղարկել:

ԴՊՐՈՑՆԵՐ

# ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

**«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանի բոլոր դպրոցներում այս տարվանից հոգեբանական ծառայություն կներդրվի:**

Այս մասին հրավիրված ասուլիսում հայտարարեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Արաքսիա Սվաջյանը՝նշելով, որ կարեւորում է այդ ծառայության կայացումը, որովհետեւ դպրոցն այն միջավայրն է, որը ոչ միայն պետք է գիտելիքներ տա, այլեւ արժեքային համակարգ պետք է ձեւավորի:

«Դպրոցը պետք է դառնա այն անվտանգ եւ ապահով միջավայրը, որտեղ երեխան որակյալ եւ արդյունավետ ուսում ստանալու հնարավորություն կունենա»,- ասաց Սվաջյանը:

Նրա խոսքով՝ առաջիկայում բոլոր դպրոցները կփորձեն համալրել հոգեբանի հաստիքները:

Անդրադառնալով այլ փոփոխություններին՝ Սվաջյանը խոսեց բոլոր դպրոցներում հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման մասին, որը կտարածվի 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարանների վրա:

Փոխնախարարը հիշեցրեց, որ նախորդ տարի չափորոշիչը փորձարկվել է Տավուշի մարզում, որից հետո համապատասխան կարգավորումներ են արվել:

Չափորոշչի ներդրմանն ընդառաջ՝դպրոցների ուսուցիչների հետ տեղի են ունեցել վերապատրաստումներ, հաստատվել է մեթոդ-դպրոցների ցանկը:

Բացի այդ, 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարանների աշակերտների համար նոր դասագրքերի ստեղծման եւ տպագրման մրցույթներ են հայտարարվել:

«Հունիսի 1-ին ամփոփել ենք դասագրքերի ստեղծման մրցույթը, որի ընթացքում դասագրքերն ուղարկվել են փորձաքննության: Այն դասագրքերը, որոնք ստացել են փորձաքննության դրական պատասխան, երաշխավորվել են, գործակցության եւ տպագրման փուլում են»,- նշեց նա:

Փոխնախարարի խոսքով՝նաեւ նախատեսվում է, որ սեպտեմբերից բոլոր դպրոցները գործելու են ֆինանսավորման նոր մոդելով. ֆինանսավորումը կտրվի՝ ըստ դասարանների թվի: Եթե նախկինում դպրոցների ֆինանսավորում իրականացվում էր՝ ըստ աշակերտների թվի, ապա այժմ իրականացվելու է՝ ըստ դասարանների թվի, որը հատկապես էական ազդեցություն է ունենալու փոքրաթիվ սովորողներ ունեցող դպրոցների ֆինանսավորման առումով: Նման հաստատությունները մշտապես խնդիրներ էին ունենում աշակերտների փոքր համակազմի պատճառով, այժմ նրանք բարելավում կունենան:

Նոր չափորոշչի ներդրվող դասարաններում լինելու է ուսուցիչների դրույքաչափի բեռնաթափում. գործող 22 ժամվա փոխարեն 2-րդ դասարանում շաբաթական 18 ժամ են դասավանդելու, իսկ 5 եւ 7-րդ դասարաններում՝ 20-ական ժամ: Աշխատավարձը պահպանվելու է 22 ժամ դրույքաչափի համամասնությամբ:

«Մինչեւ 100 սովորող ունեցող դպրոցներում, որտեղ չկար մեկ դրույքաչափով աշխատելու հնարավորություն, քանի որ առարկաների դասաժամերը քիչ էին, ուսուցիչների աշխատավարձը կկլորացվի մինչեւ մեկ դրույք, բայց ոչ ավելի, քան կես դրույքի չափով: «Այս ծրագիրը կկանխի այն հնարավոր ռիսկը, ըստ որի՝ ամբողջական դրույք չունեցող ուսուցիչները կարող են հեռանալ դպրոցից»,- նշել է փոխնախարարը:

Մեկ այլ փոփոխությամբ՝ դպրոցների բյուջեները կազմվելու են ավտոմատացված համակարգով: Ծրագիրը եւ բանաձեւերը հասանելի են Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կայքում: Տնօրեններից միայն պահանջվելու է տեղադրել ամբողջ տեղեկատվությունը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ԱՌՅԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐ՝ Wildberries-ԻՑ

**Նոր ուսումնական տարվա մեկնարկին հաշված օրեր են մնացել, եւ ծնողները փորձում են հասցնել երեխաներին նախապատրաստել դպրոցին՝ գնելով այն ամենը, ինչ անհրաժեշտ է: Ժամանակն ու ռեսուրսները խնայելու համար ավելի հաճախ գնումներ են կատարվում առցանց: Wildberries-ը վերլուծել է 2023թ.-ի հուլիս-օգոստոս ամիսներին Հայաստանի բնակիչների արած պատվերները եւ ներկայացրել ծնողների կողմից ամենաշատ գնվող ապրանքները:**

Այսպիսով, ծախսերի հիմնական մասը բաժին են ընկել դպրոցական հագուստի եւ կոշիկի, գրենական պիտույքների եւ տարբեր աքսեսուարների ձեռքբերմանը: Ապրանքների թոփ հնգյակը կազմում են զգեստները, շապիկները, տաբատները, կոստյումները եւ ջինսերը: Այս ամռանը զգեստների պահանջարկը աճել է 8 անգամ՝ 2022-ի նույն ժամանակահատվածի համեմատ, շապիկները՝11, տաբատները՝ 12, կոստյումները՝ 21, ջինսերը՝ 14 անգամ: Այս սեգմենտի ապրանքների մեծ մասը գնել են մայրաքաղաքի, Կոտայքի եւ Սյունիքի մարզերի բնակիչները:

Կոշիկների տեսականուց ծնողները նախընտրել են սպորտային կոշիկներ, որոնց պահանջարկը, 2022-ի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 12 անգամ, սանդալները՝ 11 անգամ, աշնանային կոշիկները՝ 9 անգամ: Այս սեգմենտից ամենաշատ գնումները կատարվել են նույնպես Երեւանում, Կոտայքի եւ Սյունիքի մարզերում:

Ամենապահանջված ապրանքների ցուցակում է դպրոցական ուսապարկն իր պարագաներով: Այս սեզոնին գրեթե 8 անգամ ավելի շատ ուսապարկ է ձեռք բերվել, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում. տարեկան աճը կազմել է 272%: Մնացած գրենական պիտույքներից ամենաշատը գնվել են մատիտատուփերը (+367%), գրիչները (+474%), մատիտները (+464%), տետրերը (+442%) եւ, մասնավորապես, թուղթը (+107%): Գրենական պիտույքների մեծ մասը ձեռք են բերել Երեւանի, Կոտայքի եւ Շիրակի մարզերի բնակիչները:

Հայաստանում Wildberries միջազգային առցանց հարթակը գործում է 2018թ.-ից, գործընկերների համար պատվերների տրամադրման կետերն արդեն բացվել են 2021թ.-ին, ուղիղ վաճառքները մեկնարկել են 2022թ.-ի վերջին՝ երկրում առաջին բաշխիչ կենտրոնի բացմամբ (2500 մ$^2$ մակերեսով):

2023-ին երկրում առաջին անգամ հասանելի դարձավ առաքումների ընդունումը Wildberries-ի պատվերների տրամադրման կետերում, ինչը թույլ տվեց տեղական բիզնեսներին նվազեցնել իրենց լոգիստիկ ծախսերը եւ արագացնել պատվերների առաքումը հաճախորդներին:

2023-ի առաջին կիսամյակի վերջում Հայաստանից գնորդների համար բացվել են Wildberries-ի ավելի քան 270 պատվերների տրամադրման սեփական եւ գործընկերային կետեր:

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

## ԿԱՐԾԻՔ

ՖԻԼՄ

# ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՊՐԵՄԻԵՐԱՅԻՆ

**Սեպտեմբերի 15-ից մեծ էկրաններին կհայտնվի «Սեւազգեստ կանայք» կատակերգությունը: Ֆիլմի պրեմիերան նախատեսվում էր դեռեւս մեկ տարի առաջ, սակայն մի շարք հանգամանքներով պայմանավորված՝ հետաձգվեց:**

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ պրեմիերան հետաձգվել էր՝ նախ իրավիճակով պայմանավորված, ապա՝ ժամանակային առումով ֆիլմարտադրողների ու կինոթատրոնների հետ ունեցած՝ իրար չխանգարելու պայմանավորվածության, ավելի նպատակահարմար ժամանակ ընտրելու հետ կապված:

Ֆիլմի ռեժիսոր Գոռ Կիրակոսյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեց, որ սեպտեմբերի 15-ը նշանակալի օր է իր համար եւ լավագույնը՝ «Սեւազգեստ կանայք»-ի պրեմիերայի համար, քանի որ իր առաջին ֆիլմը՝ «Մեծ պատմություն փոքր քաղաքում»-ը 17 տարի առաջ հենց այդ օրն է տեղի ունեցել:

Նա նաեւ նշեց, որ, ֆիլմի հետ կապված, որեւէ փոփոխություն տեղի չի ունեցել այս ընթացքում, նախնական տարբերակով ինչպես եղել է դեռ անցած տարվանից, այդպես ներկայացվելու է:

Խոսելով դերասանական կազմի մասին՝ Գոռը նշեց, որ ընտրված են լավագույնները. «Երբ ես դեռ ուսանող էի, իմ ռեժիսուրայի դասախոսը մի անգամ ասաց, որ լավագույն տարբերակը՝ ճիշտ դերասաններ ընտրելու, քասթինգն է: Ինքս դերասաններին ընտրելիս չեմ առաջնորդվում նրանց հայտնիությամբ, փորձում եմ գտնել այն մեկին, որին սազում է կերպարը»:

Նշենք, որ ֆիլմի գլխավոր դերերում նկարահանվել են Դիանա Մալենկոն, Իվետա Մուկուչյանը, Լուիզա Ներսիսյանը, Գրիգոր Դանիելյանը, Ռաֆայել Երանոսյանը, Ռոզի Ավետիսովան, Արտյոմ Մարկոսյանը, Ելենա Վարդանյանը, Ռոմելա Սարգսյանը, Արմեն Դարբինյանը, Աշոտ Տեր-Մաթեւոսյանը եւ այլք:

Անդրադառնալով հատկապես դերասան Արտյոմ Մարկոսյանի՝ դագաղի հետ ունեցած «անախորժություններին», ռեժիսորը նշում է, որ դերասանը սցենարը միանգամից հավանել է, բայց անընդհատ իր մոտ եղած փոքրիկ սնահավատություններին է տուրք տվել. «Իհարկե, ես դերասանների հետ մինչ նկարահանումը քննարկում, փորձում եմ հարթել ու հասկանալ բոլոր անհանգստությունները, որը եղավ նաեւ Արտյոմի դեպքում: Ի վերջո, մենք հասանք մի կետի, որ Արտյոմը խոստացավ պառկել դագաղի մեջ՝ հասկանալով, որ դագաղը պարզապես իրար ամրացված 4 տախտակներ են»:

Գոռի խոսքով՝ հասկանալն այլ է, դա անելը մեկ այլ բան, ու ինքը ի սկզբանե պատկերացրել է, թե ինչքան դժվար կլինի Արտյոմի համար, մտածել է ոգեւորման հետաքրքիր տարբերակ. «Բոլորի հետ պայմանավորվեցի, որ երբ Արտյոմը կմտնի դագաղի մեջ, բարձր ծափահարեն, ու հենց այդպես էլ եղավ»:

Խոսելով սցենարային լուծումների մասին՝ ռեժիսորը նշեց, որ սա յուրովի պատմություն է՝ որեւէ ֆիլմի չնմանվող:

Իրադարձությունները կատարվում են հոգեհանգստի ժամանակ, որին, բացի ընտանիքի անդամներից ու հարազատներից, ներկայանում են նաեւ հանգուցյալի սիրուհիները: Ընտանիքի անդամները, բնականաբար, անակնկալի են գալիս՝ նրա սիրուհիների գոյության մասին իմանալով, իսկ կանանցից յուրաքանչյուրը՝ բացահայտելով, որ ինքը միակը չի եղել: Սյուժեի հետաքրքիր մասն է կազմում հանգուցյալի կտակը:

Խոսելով առաջին ֆիլմի՝ «Մեծ պատմություն փոքր քաղաքում»-ի հետ ունեցած հավանական նմանության մասին՝ Գոռը շեշտում է, որ միակ նմանությունը հոգեհանգստի առկայությունն է, ուրիշ ոչինչ:

Կատակերգության պատմության հեղինակը Դավիթ Բաբախանյանն է, սցենարի հեղինակներն են Աշոտ Աբրահամյանը եւ Գոռ Կիրակոսյանը, գլխավոր պրոդյուսերը՝ Կարո Կիրակոսյանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

## ՀԱՅՏՆՎԵՑ ՇԱՊԻԿԻՆ ⇨

Քիմ Քեթրալը հայտնվել է հունական Vogue-ի շապիկին: Դերասանուհին հարցազրույց է տվել, որում պատմել է, թե ինչ խնդիրների են բախվում ժամանակակից կանայք:

Լրագրողների հետ զրույցում դերասանուհին բացահայտ խոսել է այն մասին, որ իր համար հեշտ չի եղել մեծ էկրան վերադառնալը: «Վաթսունն անց կանանց ամենամեծ խնդիրն աշխատավայրում պահանջված լինելն է, իրենց ճիշտ ներկայանալը, ակտուալ մնալը: Մայրս միշտ օրինակ է եղել ինձ համար, թեեւ նա երբեք չկարողացավ գտնել այնպիսի աշխատանք, որը կուրախացներ իրեն: Երկար ժամանակ նա դեպրեսիայի մեջ էր եւ տառապում էր միայնությունից, բայց միշտ համառ էր»,- հայտարարել է նա:

Հիշեցնենք, որ Սամանտա Ջոնսը, ում մարմնավորում էր Քիմ Քեթրոլը, հայտնվեց «Եվ հենց այնպես» ֆիլմի վերջին դրվագում: Արտասահմանյան մամուլը գրել էր, որ դերասանուհին չի ցանկանում նկարահանվել սերիալում Սառա Ջեսիկա Փարքերի հետ վեճի պատճառով, որը




տեղի է ունեցել դեռեւս 2018 թվականին: Այնուամենայնիվ, Քիմի սիրտը հալվել է: «Ես կարծում էի, որ եթե վերադառնամ, պետք է վերադառնամ Սամանթայի ոճով: Եվ մենք դա արեցինք», - ավելի վաղ իր վերադարձը մեկնաբանել էր դերասանուհին:

## ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՄՐՑՈՒՅԹԻՑ

Այս տարի «Մանկական Եվրատեսիլ» ամենամյա երգի մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 26-ին Ֆրանսիայում՝ Նիցցա քաղաքի Նիկայա պալատում:

Ինչպես տեղեկանում ենք «Մանկական Եվրատեսիլ»-ի պաշտոնական կայքից, հայտնի են այս տարվա երաժշտական միջոցառման մասնակից երկրների ցանկը: Մասնավորապես՝ մրցույթին մասնակցելու են Հայաստանը, Ալբանիան, Էստոնիան, Ֆրանսիան, Վրաստանը, Գերմանիան, Իռլանդիան, Իտալիան, Մալթան, Նիդերլանդները, Հյուսիսային Մակեդոնիան, Լեհաստանը, Պորտուգալիսն, Իսպանիան, Միացյալ Թագավորությունը եւ Ուկրաինան:

Հավելենք, որ «Մանկական Եվրատեսիլ 2023»-ի կարգախոսն է՝ «Հերոսները»: Պաշտոնապես հրապարակվել է նաեւ միջոցառման տարբերանշանը:

Հիշեցնենք, որ միջոցառումը 2022 թվականին տեղի ունեցավ Հայաստանում, որի արդյունքում հաղթող ճանաչվեց Լիսանդրոն «Oh Maman!» երգով:

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՀԱՅԵՐԸ՝ ՉԵՄՊԻՈՆ

Օգոստոսի 22-ից 29-ը Բուլղարիայում կայացան 2010-2012 թթ. ծնված պատանիների հավաքական մարզումներ եւ «Albena Cup» եվրոպական առաջնությունը, որին մասնակցեցին Հայաստանի, Բուլղարիայի եւ Ուկրաինայի 7 թիմեր:

Մականախաղի Հայաստանի ֆեդերացիայի փոխնախագահ Նվեր Ջաքարյանի, գլխավոր մարզիչներ Սամվել Գեւորգյանի, Արման Վարդանյանի գլխավորությամբ՝ Հայաստանի հավաքականը ջախջախիչ պարտության է մատնել մրցակից բոլոր թիմերին եւ հռչակվել չեմպիոն:

Մեր հավաքականի 17 մարզիկներից 16-ը հրազդանցի են, 1-ը՝ Երեւանից:

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ԽԱՂԱՑՈՂԸ

Անգլիայի չեմպիոն, գավաթակիր, սուպերգավաթակիր, Չեմպիոնների լիգայի գավաթակիր «Մանչեսթեր Սիթիի» 23-ամյա հարձակվող Էրլինգ Հոլանդը ճանաչվել է Անգլիայի տարվա (2022-2023) լավագույն խաղացող՝ Անգլիայի պրոֆեսիոնալ ֆուտբոլիստների ասոցիացիայի վարկածով: Քվեարկությանը մասնակցում են Անգլիայի Պրեմիեր լիգայում հանդես եկող ֆուտբոլիստները:

Մրցանակին հավակնում էին նաեւ անգլիացիներ Բուկայո Սական («Արսենալ»), Մարկուս Ռեշֆորդը («Մանչեսթեր Յունայթեդ»), Հարի Քեյնը («Տոտենհեմ»), նորվեգացի Մարտին Էդեգորը («Արսենալ») եւ բելգիացի Կեւին Դե Բրույնեն («Մանչեսթեր Սիթի»):

## ԱՆՑԱՆԿԱԼԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐ

Այս ամռանը Մադրիդի «Ռեալից» հեռացած 32-ամյա բելգիացի կիսապաշտպան Էդեն Ազարը չի ցանկացել դառնալ «Բարսելոնայի» նախկին խաղացողներ Լիոնել Մեսիի, Սերխիո Բուսկետսի եւ Ժորդի Ալբայի թիմակիցն ամերիկյան «Ինտեր Մայամիում», որը առաջարկ է արել նրան. հաղորդում է իսպանական AS-ը: Ազարը առաջարկներ ունի նաեւ Սաուդյան Արաբիայի, Անգլիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի եւ Շոտլանդիայի ոչ առաջատար ակումբներից, սակայն ֆուտբոլիստը չի համարում, որ կարող է վերադարձնել մարզավիճակը, թեեւ նրա շրջապատը փորձում է համոզել նրան շարունակել կարիերան:

## ԹԵԺ ՊԱՅՔԱՐ

Աշխարհի առաջին ռակետ, իսպանացի Կառլոս Ալկարասը մեկնաբանել է «Մեծ սաղավարտի» մրցաշարերի 23-ակի չեմպիոն, աշխարհի երկրորդ ռակետ, սերբ Նովակ Ջոկովիչի հետ իր մրցակցությունը աշխարհի առաջին ռակետի կոչման համար: ԱՄՆ-ի բաց առաջնության մեկնարկում տարած հաղթանակի շնորհիվ Նովակ Ջոկովիչը US Open-ից հետո դարձյալ կգլխավորի Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի դասակարգման աղյուսակը: «Հրաշալի պայքար է ծավալվում իմ եւ Նովակի միջեւ աշխարհի առաջին ռակետի կոչման համար: Ես գիտեի, որ US Open-ից հետո նա դարձյալ կարող է բարձրանալ առաջին տեղ՝ շրջանցելով ինձ: Մինչեւ տարվա վերջ դեռ շատ մրցաշարեր կան: Ես կձգտեմ մասնակցել դրանց, հաղթել եւ վերադառնալ առաջին տեղ»,- Ալկարասի խոսքը մեջբերում է Ubitennis-ը:

● *Սեպտեմբերի 9-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «Հրաշագործը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500-3500 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՐՑ. Ինչո՞ւ եւ ի՞նչ պաշտոնների են դասակարգվում քաղաքացիական ծառայության պաշտոնները:**

*Անի Հովեյան (32 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացիական ծառայության պաշտոնները, ելնելով այդ պաշտոնները զբաղեցնող անձանց աշխատանքի կազմակերպման եւ ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, գործունեության ազդեցության, շփումների եւ ներկայացուցչության, խնդիրների բարդության եւ դրանց լուծման, ինչպես նաեւ մասնագիտական գիտելիքների եւ կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներից, դասակարգվում են հետեւյալ խմբերի՝ քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոններ եւ քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոններ:

***Քաղաքացիական ծառայության գրասենյակ***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եւ 5-րդ ենթախմբերի: Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների խումբը դասակարգվում է 1-ին, 2-րդ, 3րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի:

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

**ՀԱՐՑ. Ինչո՞ւ կարող են մասնավորեցման գործարքները անվավեր ճանաչվել:**

*Արմեն Եղոյան (39 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Մասնավորեցման գործարքները դատական կարգով անվավեր են ճանաչվում, եթե մասնավորեցված գույքը ենթակա չէ մասնավորեցման, կամ մասնավորեցման հետեւանքով պետական սեփականություն ձեռք բերած անձն իրավունք չունի մասնակցելու մասնավորեցմանը: Վերջին դեպքում գործարքը կարող է անվավեր ճանաչվել միայն այդ անձին վերաբերող հարցով:

***Պետական գույքի կառավարման կոմիտե***

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Մասնավորեցման համար վճարումները, այդ թվում՝ հերթական վճարումը, ինչպես նաեւ մասնավորեցման գործարքի այլ պայմանները չկատարելու դեպքում լիազորված պետական մարմինը հայց է ներկայացնում դատարան գնորդին սեփականության իրավունքով պատկանող գույքի վրա բռնագանձում տարածելու մասին:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Կոռնիձորի սահմանային հատվածում ստեղծվել է վրանային հումանիտար կայան՝ նախատեսված միջազգային գործընկերների, լրատվամիջոցների եւ այն մարդկանց համար, որոնք միանում են ԼՂ ուղարկվող բեռների հումանիտար նախաձեռնությանը:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | + 8 + 11<br>+25 + 29 |
| Կոտայքի լեռներ | + 8 + 11<br>+25 + 28 |
| Կոտայքի նախալեռներ | +16 + 18<br>+28 + 30 |
| Գեղարքունիք | +8 + 13<br>+22 + 27 |
| Լոռի | +8 + 12<br>+22 + 27 |
| Տավուշ | +12 + 15<br>+24 + 28 |
| Արագածոտնի լեռներ | +9 + 11<br>+24 + 26 |
| Արագածոտնի նախալեռներ | +15 + 19<br>+27 + 31 |

| | |
|---|---|
| Արարատ | +17 + 19<br>+32 + 34 |
| Արմավիր | +14 + 17<br>+32 + 34 |
| Վայոց ձորի լեռներ | + 9 + 12<br>+23 + 25 |
| Վայոց ձորի նախալեռներ | +17 + 19<br>+32 + 34 |
| Սյունիքի հովիտներ | +16 + 19<br>+27 + 31 |
| Սյունիքի նախալեռներ | +11 + 14<br>+22 + 24 |
| ԼՂՀ | +16 + 18<br>+25 + 29 |
| Երեւան | +19 + 21<br>+29 + 31 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.8.2023**
Հասցեն՝ Գերադրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*